# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ և ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

## ՎՎԿ ՓԲԸ

**ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 22-7/1**

**Հեռ.՝ (+374 10) 56 09 74 , ֆաքս (+374 10) 56 07 41**

**էլ.փոստ՝ info@nmc.am,**

**ինտերնետային կայք՝ www.nmc.am**

## Հաշվետվություն թիվ 03, 10.04.2025

*«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ գործադիր տնօրենի 2025թ. ապրիլի 10-ի 054Լ և 055Լ հրամանների համաձայն՝ ս.թ. մարտի 28-ի 049Լ և 050Լ հրամաններում կատարվել են փոփոխություններ: Մասնավորապես աճուրդի անցկացման օրը սահմանվել է երկու հաջորդող օրեր՝ ապրիլի 10-11-ը, ինչպես նաև փոփոխություններ են կատարվել վերջնական պայմաններում:*

*Կից՝ Ընկերության գործադիր տնօրենի 054Լ և 055Լ հրամաններ:*

NMC
National Mortgage Company

NATIONAL MORTGAGE COMPANY RCO CJSC
REFINANCING CREDIT ORGANIZATION

ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 22-7/1 | Armenia 0010, Yerevan, Hanrapetutyan St., 22-7/1 | +37410 560974 | info@nmc.am | www.nmc.am

**«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»**

**ՎՎԿ ՓԲԸ**

**ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ**

**ՀՐԱՄԱՆ**

**2025 թվականի ապրիլի 10-ի թիվ 054Լ**

**«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի ԹԻՎ 049 Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*Հիմք ընդունելով* «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ խորհրդի 2024թ. դեկտեմբերի 17-ի թիվ 038Լ որոշման 2-րդ կետը և ՀՀ Կենտրոնական Բանկի նախագահի 2025թ. փետրվարի 12-ի թիվ 1/46Ա որոշումը «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ պարտատոմսերի ծրագրային ազդագիրը գրանցելու մասին,

*ղեկավարվելով* «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածով և «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 9.3 կետի «ա», «ը» և «ժա» ենթակետերով,

**Հրամայում եմ՝**

**1.** «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ գործադիր տնօրենի 2025 թվականի մարտի 28-ի թիվ 049 Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելվածի 1.10 կետի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Աճուրդն անցկացվում է երկու հաջորդող օրերի ընթացքում,».

2) Հավելվածի 1.30 կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Պարտատոմսերի կտրման նվազագույն գինը՝ պարտատոմսերի տեղաբաշխման առաջին օրվան նախորդող 5 աշխատանքային օրերի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի 36 ամիս ժամկետայնությանը համապատասխանող տոկոսադրույքների միջինին 50 բազիսային կետով գերազանցող արժեքը:»:

**2.** Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գործադիր տնօրեն՝ Էդմոնդ Վարդումյան

NMC
National Mortgage Company

NATIONAL MORTGAGE COMPANY RCO CJSC
REFINANCING CREDIT ORGANIZATION

ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 22-7/1 | Armenia 0010, Yerevan, Hanrapetutyan St., 22-7/1 | +37410 560974 | info@nmc.am | www.nmc.am

**«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»**

**ՎՎԿ ՓԲԸ**

**ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ**

**ՀՐԱՄԱՆ**

**2025 թվականի ապրիլի 10-ի թիվ 055Լ**

**«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի ԹԻՎ 050 Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*Հիմք ընդունելով* «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ խորհրդի 2024թ. դեկտեմբերի 17-ի թիվ 038Լ որոշումը, «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ գործադիր տնօրենի 2025 թվականի մարտի 28-ի «Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին» թիվ 049 Լ որոշման հավելվածի 1.7 կետը և

*ղեկավարվելով* «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի «թ» ենթակետով՝

**Հրամայում եմ՝**

1. «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ գործադիր տնօրենի 2025 թվականի մարտի 28-ի թիվ 050 Լ հրամանի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ««Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ խորհրդի 2024թ դեկտեմբերի 17-ի թիվ 038Լ որոշման, ինչպես նաև «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ գործադիր տնօրենի 2025 թվականի մարտի 28-ի թիվ 049 Լ հրամանի հիման վրա պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի անցկացման օրերը սահմանել 2025 թվականի ապրիլի 10-ը և ապրիլի 11-ը:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Գործադիր տնօրեն՝** **Էդմոնդ Վարդումյան**